

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅԻ
ԻՐԱՎՈՒՆԸՈՒՄ (VII-XI դդ.)

Իբրև հանցագործության ապացուցման հնարամիտ միջոց անգլոսաքսոնական թագավորություններում գրեթե լայն տարածում էին գտել շիկացած երկաթով և եռացրած ջրով դատական փորձությունները, որոնք պատմաիրավական գրականությունում, որպես կանոն, ընդունված էր կոչել «Աստծու դատ Աստվածային դատաստան»¹ կամ «Աստծու սաստիկ պատիժ»:²

Դատական դաժան փորձությունների հնարամտության միջոցով ծանրագույն հանցագործությունների բացահայտման, հանցագործի մեղքի կամ անմեղության հիմնավորման, հաստատման ու ապացուցման, ինչպես նաև օրինական և արդարացի դատավճիռ կայացնելու վերաբերյալ փորձությունների *քրեադատավարության* առեղծվածն առաջին անգամ հաստատագրել է Հնագույն Բաբելոնի ստրկատիրական թագավորության տիրակալ Համմուրաբի թագավորը մ.թ.ա. 1792-1750թթ.:

Համմուրաբի թագավորի օրենքների (դատաստանագրքի) 2, 129, 132, 141 և 143 հոդվածների իրավական շեշտադրության համաձայն՝ ծանրագույն հանցագործություն կատարելու մեջ կասկածվող մարդը փորձությունների էր ենթարկվում ջրով: Ըստ որում՝ Բաբելոնի թագավորության դատարաններում հանցագործության ապացուցման տարատեսակներ էին համարվում կասկածյալի կամ մեղադրյալի երդում-ցուցմունքը, վկաների և տուժողների ցուցմունքները, գրավոր ու իրեղեն ապացույցները: Նրա դատաստանագրքի հոդված 2-ն ուղղակի սահմանում էր, որ, եթե մարդը մեղադրվում էր կախարդություն կատարելու մեջ, և կախարդությունը չէր ապացուցվում, ապա կասկածվողը կամ մեղադրվողը իրեն նետում էր հոսող գետի մեջ: Եթե գետը քշում տանում էր նրան, ապա մեղադրողը տիրում էր մեղադրվող հանցագործի տանը: Իսկ եթե վերջինս չէր խեղդվում և անվնաս էր մնում, ապա այս դեպքում նա համարվում էր անմեղ, իսկ կախարդության մեջ մեղադրողը ենթարկվում էր մահապատժի: Այսպիսի հանգամանքներում ու դեպքերում մահապատժվածի տունը տնօրինում էր կախարդության մեջ կասկածված կամ մեղադրված անձը: Համմուրաբի թագավորի օրենքները հիշատակում են, որ սառը ջրով դատական փորձության էր ենթարկվում այն կինը, որն սիրաբանությամբ էր զբաղվում այլ տղամարդու հետ: Այսպիսի դեպքում երկուսին կայում ու նետում էին գետը (հոդվ. 129): Այդպես էլ եթե կինն աննպատակ հեռանում էր տնից, աղքատացնում, շռայլաբար ու մխտոլաբար վատնում էր տան ունեցվածքը, ապա նրան ևս նետում էին գետը (հոդվ. 142, 143):³

Դատական փորձությունների քրեական դատավարության առեղծվածի շարունակությունն իր իրավական ամրապնդումն է գտնում Հնագույն Հնդկաստանում՝ ստրկատիրության դարաշրջանում, մասնավորապես, առասպելական նախահայր Մանուի օրենքներում: Այդ իրավունքի աղբյուրը շարադրել ու կազմել է Բրահմանների (սուրբ գրքերը՝ Վեդաները մեկնաբանողների) քրմական դպրություններից մեկը, մոտավորապես մ. թ. ա. II դարից մինչև մ.թ. II դարն ընկած ժամանակաշրջանում: Պետք է ենթադրել, և դա հավանական է, որ Մանուի օրենքները Հնագույն Հնդկաստանի դրախմաշաստրայի իրավական նորմերի առաջին օրինակարգումը կամ օրենքների համակարգումն էր:

Հնագույն Հնդկաստանում դատավարության ընթացքում ցուցմունքների հավաստման, հաստատման արժեքավորումը, հիմնավորումը և որակումը կախված էին մարդկանց այն կամայականությունից և կամահաճոյությունից, թե որ կաստային կամ

¹ G. Frederick, Jr. Kempin, *Historical Introduction to Anglo-American Law. Third Edition. Pennsylvania, 1990, p. 58:*

² G. Smith, *A History of England. Third Edition. New-York, 1966, p. 24:*

³ *Стів Закони Хаммурапи, М., 1960; Хрестоматия по истории государства и права зарубежных стран, N 12, М., 1984, стр. 56-57; 3. Черниловский, Хрестоматия по всеобщей истории государства и права, N 10, М., 1996, стр. 17-18:*

կաստաներին էր (of the caste or castanets) պատկանում վկան: Ըստ որում՝ քրահանաների ցուցմունքներն առավել արժեքավոր էին գնահատվում: Իսկ եթե վկաներ գոյություն չունեին, ապա դատավորները հարցի կամ մեղադրանքի իսկությունը և ճշմարտությունը բացահայտելու համար նշանակվում էին դատական փորձություններ:

Մանուկ օրենքների իրավական տեսության համաձայն՝ Հնագույն Հնդկաստանում գոյություն են ունեցել ու կիրառվել են հինգ տարաբնույթ փորձություններ: Առաջին տարատեսակն էր կշեռքով փորձություն: Ըստ որում, մեղադրյալին կշռում էին կրկնակի: Եթե նա երկրորդ անգամ իր կշռով ավելի թեթև էր, քան առաջին անգամ, ապա նա ճանաչվում էր անմեղ: Երկրորդ տարատեսակը փորձությունն էր կրակով: Այս դեպքում մեղադրյալն ստորաշեղ (շիկացած) առարկան բռնում էր իր ձեռքով: Եվ եթե այդ փորձությունից հետո խարանվածքի հետքեր չէին երևում, ապա նա ճանաչվում էր անմեղ:

Երրորդ տեսակի փորձությունը կատարվում էր սառը ջրով: Հանցագործության կատարման մեջ մեղադրվողին նետում էին սառը ջրով լցված խոր հորի մեջ, և եթե նա չէր խեղդվում, ապա դատարանը նրան ճանաչում էր անմեղ: Չորրորդը՝ փորձությունն էր թույնով: Այս դեպքում դատարանը որոշում էր կասկածյալին կամ մեղադրյալին տալ սահմանված չափի թույն: Եվ եթե թույնը խմելուց հետո վերջինս չէր մահանում, ապա համարվում է անմեղ:⁴ Հինգերորդ դատական փորձությունը կասկածյալի կամ մեղադրյալի «աստվածային ոգեկոչման երդումն էր»՝ հետևյալ բովանդակությամբ. «Ո՛վ, Տեր՝ իմ Աստված, եթե այս բանը արել եմ, եթե անիրավություն կա իմ ձեռքերում, եթե չար եմ հատուցել ինձ հետ խաղաղ լինողին և կողոպտել եմ ինձ գուր տեղը նեղացնողին, ապա թող թշնամին հալածե՛ իմ անձը և հասնե՛ նրան, որ իմ կյանքը կոխ տայ գետնի վերայ և իմ փառքը հողի մեջ բնակեցնե՛»: ⁵ Եվ եթե կասկածյալը կամ մեղադրյալը հանցագործության իսկության բացահայտման արարողության և երդման ժամանակ այլալվում էր իր դեմքով, կեցվածքով ու վարքագծով, ընկնում էր շփոթության մեջ, ապա նրա մեղքը համարվում էր ապացուցված:

Մանուկ օրենքների 83 հոդվածը հիշատակում է, որ դատարանում ճշմարիտ ցուցմունք տալու համար վկաներ էին հանդիսանում բոլոր կաստաներին պատկանող մարդիկ: Իսկ 113 հոդվածը սահմանում և պատվիրագրում էր, որ ծանրագույն հանցագործությունների կատարման դեպքերում դատարանում հարկադրաբար երդվում էին քրահանները, քշատրիները, վաշիները և շուղրիները:⁶

Հնագույն Բաբելոնի և Հնագույն Հնդկաստանի դատական դաժան փորձությունների իրավական տեսությունն իր կենսագործումն ու ընդօրինակումը գտավ Արևմտյան Եվրոպայում ավատատիրական թագավորությունների ձևավորման վաղ ժամանակաշրջանում: Այսպես, «գեռևս վեցերորդ դարում Ֆրանկյան տարեգրությունները հիշատակում են փորձության մի քանի ձևեր, մասնավորապես, ֆրանկյան ավատատիրության իրավունքի աղբյուրում՝ Սալիկյան պրավիդայում (Lex Salica):⁷ Այդ իրավունքի աղբյուրում գրառվել են սալիկյան (առափնյա) ֆրանկների դատական սովորույթները: Դատական սովորույթների գրառված իրավունքի աղբյուրներ ունեին նաև գերմանական մյուս ցեղերը: Այսպես, օրինակ՝ բուրգունդական ցեղերն ունեին իրենց բուրգունդական պրավիդան, ալեմանները՝ ալեմանական, վեստգոթերները՝ վեստգոթերյան պրավիդան, բավարները՝ բավարական, սաքսերը՝ սաքսոնական պրավիդաները: Այդ բարբարոսական պրավիդաների իրավական համակարգում յուրահատուկ տեղ էր գրավում Սալիկյան, որը գրառվել էր V-VI դարում՝ կարոլինգների գահատոհմի թագավոր Հլոդվիգի կառավարման ժամանակաշրջանում (481-511 թթ.):

Սալիկյան պրավիդայի՝ «Ձեռքերը կաթսայից փրկագնելու մասին (LIII) վերտառության 1 և 3 դրվագները (LIII.1.3.) և «գատարան չներկայանալու վերաբերյալ» LVI վերնագրի 1 դրվագը (LVI. 1) նվիրված էր եռացրած ջրով փորձությունների դատական ապացույցների հիմնավորվածությանը: Մեղադրյալի դատական փորձությունը կամ

⁴ *Законы Хаммурапи, М., 1560; Хрестоматия по истории государства и права зарубежных стран, М., 1984, 12, 18, стр. 28-29.*

⁵ *St'u Uստվածաշունչ, Stuttgart, 1991, էջ 643:*

⁶ *Законы Хаммурапи, М., 1960; Хрестоматия ..., стр. 28-29.*

⁷ *G. Frederick, Jr. Kempin, նշվ. աշխ., էջ 58:*

արարողությունը տեղի էր ունենում նաև ատրաշեկ երկաթով: Տվյալ ժամանակաշրջանի մարդկանց իրավական մտածողությանը և պատկերացմանը՝ արդար դատաստանն իրականացվում էր «գերբնական ուժի՝ Աստծու դատաստանի միջոցով»: Դատական փորձությունը կատարվում էր կաթսայի եռացրած ջրով: Փորձության ենթարկվող կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր էր իր ձեռքն ընկղմված պահել կաթսայի եռացրած ջրի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ չէր արտաբերել սրբազան ու նվիրական, պատրաստի ու անփոփոխ ոգեկոչման արտահայտությունները: Չեղբը կապում և որոշ ժամանակ անց մանրագին բուժազննում էին դատարանում: Եթե փորձարկվողի ձեռքի վերքը սահմանված ժամանակում ամոքվում և բուժվում էր, ապա դատարանը նրան անմեղ էր ճանաչում, հակառակ դեպքում նա դատապարտվում էր օրենքի ամենայն խստությամբ: Սահմանված փորձությունից օրենքով թույլատրվում էր ազատվել միայն փրկագին միջոցով, եթե կասկածյալը կամ մեղադրյալն օրենքով նախատեսված կարգով տուգանք էին վճարում տուժողին և թագավորին:⁸ Իհարկե, փրկագումը՝ որպես արտոնություն, նախատեսված էր հարուստ և ունևոր խավերի ու խմբերի համար:

Ֆրանսիայի ավատատիրական թագավորությունում՝ դեռևս նրա սկզբնավորման ու կազմավորման ժամանակաշրջանում, բացի դատական փորձություններից, դատարանում ապացույց էր համարվում երդում-ցուցմունքը, ինչպես նաև դատական մենամարտը: Իսկ վերջին դեպքում թույլերը, հիվանդները և կանայք կարող էին իրենց փոխարեն առաջ քաշել կամ առաջադրել, այսպես ասած, մարտունակ ռազմիկներին:

Ժամանակակից ամերիկյան իրավագետ-պատմաբան Ֆրեդերիկ Ջ. Քենսիփը «Անգլո-ամերիկյան իրավունքի պատմական ներածություն» աշխատությունում հիշատակում է, որ քրիստոնեության հետ մեկտեղ դաժան փորձությունները տարածվում էին Արևելյան Եվրոպայում, Անգլիայում և Իռլանդիայում: Փորձությունները գլխավորապես լայն կիրառում են ստանում սկսած IX-XII դդ.:⁹ Գործածվել են դաժան փորձությունների չորս ձևեր՝ եռացրած կամ սառը ջրով, շիկացած երկաթով և նվազագույն կերակրով: Առաջին երկուսը կիրառվում էր աղբատների և անազատների նկատմամբ: Անազատների նկատմամբ գործածվում էր նաև ատրաշեկ երկաթով փորձությունը:

Նվազագույն կերակրով փորձությունը գործադրվում էր հանցագործության կատարման մեջ մեղադրվող հոգևորականի նկատմամբ:¹⁰

Հնագույն Անգլիայի թագավորությունների օրենսդրություններում հիշատակվում են քրեական դատավարության իրավունքի նորմերի խախտման դեպքերում դատարանի կողմից նշանակվող այնպիսի փորձություններ, որոնք կիրառվել են դեռևս Հնագույն Բաբելոնի և Հնագույն Հնդկաստանի թագավորությունների քրեական դատավարություններում:

Այսպես՝ Ուեստսեքսի Ինե թագավորի (688-726թթ.) օրենքների 37 հոդվածի համաձայն, եթե կեռը բազմաթիվ անգամ մեղադրվել էր գողության կատարման մեջ և կաթսայի եռացրած ջրի միջոցով ճանաչվել էր որպես հանցագործ-մեղադրյալ, ապա կտրում էին նրա ձեռքը կամ ոտը:¹¹

Էդգար թագավորի (959-975թթ.) օրենքների իրավական տեսության համաձայն՝ դատական փորձությունը կարող էր փոխարինվել նյութական պատասխանավությամբ: Նա հարյուրակների տիրույթների վերաբերյալ իր հրամանագիր-օրենքում հիշատակում է, որ «եռակի փորձությունը պետք է զնահատել երեք ֆունտ, իսկ առանձինը՝ մեկ ֆունտ»:¹²

Դատական դաժան փորձությունները որպես՝ հանցագործության ապացուցման միջոց, որոշակի տեղ էին զբաղում նաև Էտելրեդ II թագավորի (978-1016թթ.) րենք-

⁸ Хрестоматия памятников феодального государства и права стран Европы, М., 1961, стр. 21-23.

⁹ G. Frederick, Jr. Kempin, նշվ. աշխ., էջ 58:

¹⁰ Նույն տեղում, էջ 59:

¹¹ Attenborough. The Laws of Earliest English Kings. London, 1922; Smith G. A History of England Third edition. New-York, 1966, p. 24-25.

¹² Stubbs W. Select, Charters and other illustrations of English Constitutional History. Oxford, 1870, p. 69-70.

ներում:¹³ Ընդ որում, ինչպես Էդգար, այնպես էլ Էտելրեդ II թագավորների օրենքներում հիշատակվում է երկակի և եռակի դաժան դատական փորձությունների մասին:

Անգլիայի ավատատիրության իրավունքի աղբյուրները հավաստում են, որ 938թ. մինչև 1000թ. ընկած ժամանակաշրջանում դատական փորձությունների իրավական հիմունք է եղել անհայտ հեղինակների կողմից գրված և քրեական դատավարությունում կիրառված, «Շիկացած երկաթով ու եռացրած ջրով, փորձությունների մասին օրենքը»:

Հիշյալ օրենքի I հոդվածում ուղղակի գրված է «Աստծու հրամանով՝ երկաթով կամ ջրով փորձությունների կատարումը պատվիրագրվում է Քենտրբերիի արքեպիսկոպոսին, մյուս եպիսկոպոսներին»:¹⁴ Իսկ փորձության կատարումը տեղի էր ունենում եկեղեցում՝ քահանաների ներկայությամբ: Եթե փորձությունը կատարվում էր ջրով, ապա այն պետք է տաքացվեր մինչև եռման աստիճան: Որպես կանոն՝ եռման ջրի շոգեկաթսան պետք է լիներ երկաթից կամ պղնձից, կապարից կամ հրակայուն կավից: Եթե կասկածյալը կամ մեղադրյալը ենթարկվում էր փորձության շիկացած՝ երկաթով, ապա նա ընկնում էր սրբագործված կամ օրհնված ջուրը, կապկպում էին նրա այն բազուկը, որով բռնելու և նետելու էր ատրաշեկ դարձած երկաթը: Դրանից հետո փորձարկվողի բազուկը կնքվում և երրորդ օրը բուժազննվում էր՝ դատարանում ապացուցելու համար նրա մեղքը կամ անմեղությունը: Այդ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում էր, որ դատական փորձության այդպիսի կարգը խախտելու դեպքում փորձությունը համարվում էր անվավեր, իսկ հանցագործության կատարման մեջ մեղադրվողը թագավորին չհնազանդվելու պարագայում տուգանվում էր 120 շիլլինգով: Մակայն նշված օրենքում չէր հիշատակվում, թե դատական փորձությունը մնան պարագայում կրկնվելու է, թե ոչ: Պետք է ենթադրել, որ այն շարունակվելու էր այնքան ժամանակ, քանի դեռ կասկածյալի կամ մեղադրյալի մեղքը կամ անմեղությունն ապացուցված չէին դատական կարգով: Եվրոպական մայրցամաքում IX-XII դարերում դատական դաժան փորձությունները գործածվում էին ոչ միայն ծանրագույն հանցագործությունները բացահայտելու, այլև քաղաքական նպատակների հասնելու համար: Միջնադարյան Անգլիայում, որպես կանոն, դատական դաժան փորձությունները կիրառվում էին միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ էր քրեական գործերը հասցնել հավաստի և վերջնական լուծման: Ծանրագույն հանցագործությունները բացահայտելու համար դատական դաժան փորձության էին ենթարկվում ոչ միայն տղամարդիկ, այլև խիստ անհրաժեշտ դեպքերում՝ նաև կանայք:¹⁵

Արևմտյան Եվրոպայում «Աստվածային դատաստանի» յուրաքանչյուր դաժան փորձություն, ըստ էության, իրենից ներկայացնում էր եկեղեցական մի փառավոր արարողության բաղկացուցիչ իրադարձություն: Չնայած բարձրաստիճան հոգևորականները ծանրակշիռ աջակցություն էին ցույց տալիս դատական դաժան փորձությունների իրականացմանը, այնուամենայնիվ, այդ առնչությամբ արդեն IX դարում բազմաթիվ ու բազմաբնույթ էին նաև բողոք-զանգատները դատական դաժան փորձությունների գործադրման դեմ: Իսկ XII դարից սկսած՝ այն քննադատության ավելի սուր բնույթ ուներ և համընդհանուր դժգոհության տեղիք էր տալիս հասարակական լայն խավերի ու խմբերի շրջանակներում: Մեղմելու համար հասարակական վրդովմունքը, հոգևորականությունը տարաբնույթ փաստարկներ էր մեջբերում, որոնք հավաստի և համոզեցուցիչ չէին: Իսկ աշխարհիկ քաղաքական իշխանությունը դատական դաժան ու ծանր փորձությունների դադարեցումը հիմնավորում էր նրանով, որ մինչև XI դարը հռոմեական կաթոլիկ եկեղեցու պապերը ենթարկվել էին աշխարհիկ դատական ատյաններին և այդ պապերից շատերը նշանակվել ու պապական աթոռից հեռացվել էին կայսր-տիրակալի կողմից:¹⁶

1215թ. հրավիրվում է Լյուսերականության չորրորդ խորհրդի նստաշրջան, որտեղ խորհրդի ազդեցիկ ու հեղինակավոր անդամները նպատակապես և արտակարգ

¹³ *Attenborough. The Laws of Earliest English Kings. London, 1922, Stubbs W. Select Charters and other illustrations of English Constitutional History. Oxford, 1870, p. 71-72.*

¹⁴ *Стів Хрестоматия памятников феодального государства и права стран Европы. М., 1961, стр. 91-92.*

¹⁵ *G. Frederick, Jr. Kempin, նշվ. աշխ., էջ 59-60:*

¹⁶ *Նույն տեղում, էջ 60:*

քննադատության են ենթարկում հոգևոր դատական դաժան փորձությունների գործադրումը: Խորհրդի աստվածաբան անդամները Աստվածաշնչի հոգևոր դրույթներով էին հիմնավորում միայն նրա դատաստանների ճշմարիտ և արդար լինելը՝ պնդելով, որ Աստված ինքն է սահմանել հոգևոր պատիժներ անհավատության, ստախտության, անբարոյականության և հոգևոր բոլոր մեղքերի համար: Մինչդեռ, այսպես կոչված, «Աստվածային դատաստանները» հակաստվածային, հակահոգևոր հմարքներ են, որ հակասում են Աստծու կամքին և նրա նկատմամբ եղած հավատքին, հույսին և սիրուն: Նրանք միաժամանակ հաստատագրում էին, որ Աստված ֆիզիկական տանջանքներ չի նախատեսել մարդու, նույնիսկ հանցագործների համար, և որ հանցագործությունը աշխարհիկ մեղք է: Լյութերականության չորրորդ խորհրդի կողմից «Աստվածային դատաստանի» մերժումը արժանանում է քաղաքական իշխանությունների և ժողովուրդի բուռն հավանությանը: Այդ խորհրդի որոշմամբ՝ վանականներն այլևս իրավունք չունեին իրականացնելու դատական դաժան փորձություններ: Իսկ պետական-իրավական տեսակետից դա մի առաջադիմական քաղաքական քայլ էր եկեղեցին պետությունից, աշխարհիկ իշխանությունից անջատելու գործընթացի մեջ:¹⁷

Դատական դաժան փորձությունների գործադրման փոխարեն հանցագործության կատարման մեջ մեղադրվողներին դատապարտելու, ինչպես նաև արդարացնող կամ դատապարտող դատավճիռ կայացնելու համար դատավորներն աստիճանաբար սկսում էին դիմել երդվյալ ատենակալների իրավական ինստիտուտին՝ երդվյալ ատենակալների դատարանին:

Դատական նիստերի ժամանակ իրենց կարծիքն արտահայտելիս երդվյալ ատենակալները հիմք էին ընդունում ոչ թե վկայությունները, այլ տվյալ գործի վերաբերյալ ձեռք բերված բոլոր տեղեկությունները: Սակայն դատավարության այդ կարգը նորանմուծություն էր, և դատարանը իրավունք չունեի որևէ ձևով հարկադրել մեղադրյալին՝ ենթարկվելու քրեաիրավական դատավարության այդ նոր կարգին: Եվ եթե նա մերժում էր ժյուրիին՝ երդվյալ ատենակալ դատավորներին, ապա քրեական գործը քննող դատարանը փակուղու առաջ էր կանգնում: Քրեական դատավարության այս փակուղին կամ դատավարական այս բացն իր վերջնական լրացումն է ստանում 1275թ. Վեստմինստերյան I ստատուտում:¹⁸ Եթե մեղադրյալը հրաժարվում էր ժյուրիին ընդունելուց, ապա ձեռքակալվում և ենթարկվում էր ֆիզիկական տանջանքների: Բանտարկյալները հիմնականում չէին ընդունում ժյուրիին, քանի որ այն նշանակված էր դատավորներից, որոնք նախկինում իրենց դատապարտել էին: Իսկ դա նշանակում էր, որ մեղադրական դատավճիռը նախօրոք կանխորոշված բնույթ էր կրում: Դատաիրավական այս բացը կամ խոչընդոտը վերացվում է 1351-1352 թթ., երբ որոշվում է ժյուրիի կազմում չընդգրկել այն դատավորներին, ովքեր դատապարտել էին մեղադրյալին: Քրեական դատավարության այս ընթացակարգին դատավարական վերջակետ է դրվել մոտավորապես հարյուր տարի հետո: Քանի որ ժյուրիի անդամների համար քրեական դատավարության ընթացքում իրավական հիմքը կենսափորձն ու գիտելիքներն էին, ուստի հնարավոր էր ու չէր բացառվում գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար սխալ դատավճի կայացումը: Եվ եթե դատավորը կասկածում էր ժյուրիի կայացրած դատավճի արդարացիությանը, ապա նա նշանակում էր 24 մարդուց բաղկացած մեկ այլ ժյուրի՝ կեղծիքի համար դատապարտելու առաջինի անդամներին: Վերջիններիս մեղավոր ճանաչվելու դեպքում դատարանը իրավունք ուներ ձեռքակալելու առաջին ժյուրիին և բռնագրավելու նրա շարժական կայքը՝ հօգուտ թագավորական իշխանության: Դատավորի այսպիսի որոշումը չկատարելու կամ արհամարհելու դեպքերում դատարանը կարող էր ժյուրիին մեծ չափերի հասնող տուգանքի ենթարկել:

XVI դարում ժյուրիին՝ երդվյալ ատենակալ դատավորների ինստիտուտը, պատասխանատու է դառնում նաև այլ, ընդհուպ մինչև Աստղային պալատի դատավարական գործընթացների համար:¹⁹

Այսպիսով, Արևմտյան Եվրոպայում, առանձնապես Անգլիայում, «Աստվածային դատաստանի» դաժան փորձություններն աստիճանաբար դուրս են մղվում քրեա-

¹⁷ G. Frederick, Jr. Kempin, *նշվ. աշխ.*, էջ 62:

¹⁸ Նույն տեղում, էջ 63:

¹⁹ Նույն տեղում, էջ 63-64:

կան դատավարությունից, կանխվում է դատական ապացույցների ձեռքբերման դաժան փորձությունների ոչ իրավական համակարգը: Սկսվում է եկեղեցին քաղաքական իշխանությունից տարանջատելու գործընթացը. հանցագործության կատարման մեջ կասկածվողների կամ մեղադրվողների վերաբերյալ քրեական գործերի դատավարության իրավունքի վերապահումը աշխարհիկ դատարանների իրավագործությանը և երդվյալ ատենակալների դատարանների կազմավորումը:

СУДЕБНЫЕ ИСПЫТАНИЯ В АНГЛИЙСКОМ ПРАВЕ (VII-XI вв.)

___ *Резюме* ___

___ *Э. Есаян* ___

В Западной Европе, особенно в Англии, суровые судебные испытания как духовная мера наказания “Божественной расправы” постепенно вытеснялись из уголовного процесса, была отменена несудебная структура получения доказательств с помощью суровых испытаний, начался процесс разграничения церкви от политической власти. Уголовное судопроизводство в отношении преступников, привлеченных к уголовной ответственности, было передано под ведение светских судов, также основался и сформировался Суд присяжных заседателей.